1567. Ի թվին Հայոց ՉՂԶ. Սեպտեմբեր ամսոյ 10 Կամենից քաղքին մեծ մահ եղաւ. Ֆրանգ ազգն և Ըրուզ ազգն խիստ շատ մեռան։ Յետոյ այլ կրկին անկամ մեծ մահ եղաւ թվին ՉՂԷ. և այն յետի մահուն այլ շատ մեռան քան զառաջինն։

1547. Ի թվին Հայոց ՉՂԶ. Կամենից քաղաքին ներսի՝ կանանչ դարձաւ, որ բնաւ այդպէս բան չէր եղեալ. զերայ մահուն ցուցակ էր։

1548. Ի թվին Հայոց ՉՂԷ. Ապրիլի մէկ, օրն Զատկին կիրակի, բարեպաշտ թագաւորն մեր Զիկմունդ առ Աստուած փոխեցաւ. Աստուած զիւր հոգին լուսաւորէ։

1548. Ի թվին Հայոց ՉՂԷ. Բարեպաշտ թագաւորն մեր Զիկմունդ Ակուսդուս՝ ի թագաւորութիւն նստաւ. զոր Տէր Աստուած ժամանակն երկայնակեաց և զիւր մէկ օրն հազար այնէ։

1549. Ի թվին Հայոց ՉՂԸ. Տէր Ստեփանոս Ըստամբօլու պատրիարգն եկն ի Կամենից, և Կամենիցն քարոզեց։

1549. Թվ. ՉՂԸ. Տէր Վարդերեան Թորոսին որդին՝ մէկ գեղեցիկ և փառաւոր զանկակ երետ ի Ս. Աստուածածնին եկեղեցւոյ, յիշատակ իւրին նընջեցելոցն։ Եւ ի նոյն ամին եկաւ Դաւիթ վարդապետ մի, և Տէր Մելքիսեդեկ կրօնաւոր ի Կամենից քաղաքն, և քարոզեց. և իւր սարկաւագ մի կայր Աղատ անուն, մահին վաղճանեցաւ. Աստուած ողորմի իւր հոգուն։

1550. Ի թվին Հայոց ՉՂԹ. Օլախի պարոնն հեծեալ ղրկեց Պարին վերայ, որ զԲրէդվիչն բռնէին. և աստուածային զօրութեամբ և Ս. Հոգւոյն կարողութեամբ, երկու երեք հարիւր հոգով զՕլախ հեծելն ջարդեց. զորն ջարդեց, և զայլն ի ներսն ընկղմեց, աստուածային օգնականութեամբ։

1551. Ի թվին Հայոց ՌԼ. Տէր Մակար եպիսկոպոս և Տէր Յակոբ եպիսկոպոսն և Տէր Մարկոս կրօնաւոր Նուիրակ եկան։

1551. Թվ. ՌԼ. Շտեֆան պարոնին զորդին՝ անունն Իւոն՝ Վոյվոտայ էր, բերին որ Օլախաց երկիրն տէր դնէին, և ոչ դրին. քանզի երկիրն չտրըվեցաւ։

1551. Ի թվին ՌԼ. Օլախի երկրին Շտեֆան պարոնն՝ Օլախի երկրին զՀայերն եհան ի հաւատէ, և զեկեղեցեստան քակեց զամէն բովանդակ[1]։

1. Այս ծանօթ պժգալի դիպուածին վրայօք՝ դաբ մի վերջը Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան, եղբայր Երան. Կոմիտասայ, գրէ այսչափս. «Ի թվականութեանս Հայոց ՌԼ-ին, ի » Սեչով քաղաք երկիր Ուլախին, թագաւորն Ստեփան՝ դաւանութեամբ Յունաց, բռնութեամբ » կալաւ հաղար տուն ի Հայոց ազգէ, գրով, դարձուցանել յաղանդս իւր, որք ընդ նորա խշ- » խանութեամբ էին. և որք ոչ դարձան՝ նահատակեցան։ Յորոց մինն ի բաղմաց խաչատուր